

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2014 թ. 2-րդ ԿԻՍԱՄՅԱՆԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մարզային հողաշինության տեսչության պետ՝ Ա.Դարբինյանի, համայնքի ավագանու և համայնքի 50 բնակիչների.

21.01.2015 թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով ,համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահած իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2014 թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրերի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարելիորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժշտություն է եղել լուծելու 2014 թ. 2-րդ կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը ,ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, իրչպես նաև կազմակերպվում է աշնանացան հացահատիկի վարի և ցանքսի աշխատանքների:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականաներերը բացակայում են

2. Անվճարունակ են

ՈՒՇաղրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 130.750 տոննա ազոտական սիլիտրա և 4.840 լիտր դիզելային վառելանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարաբային միջոցառումները, կենդանիների

հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 6 առևտրի ծառայության օբյեկտներ:

**ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման ,ինչպես նաև ընդերքօգտագործման վրա:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքներ հավաքագրման ուղղությամբ:

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Կառավարության սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:

2014թ. Բամբակաշատ համայնքում իրականացվել է նաև խորքային պոմպերի վերանորոգում ,որով 500 հա հողատարածք ապահովվել է ռոտման ջրով:

Սիստեմատիկաբար, ամիսը 15 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2014 թ. համայնքի բյուջեից 990.0 հազար դրամ:

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը 367

Աշխատողների թիվը 50, որից՝ ուսուցիչներ՝ 39

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նախադպրոցական 2 խմբերի համար համայնքի բյուջեից 840.0 հազար դրամ սուբսիդիա է հատկացվել խմբերի գործունեության պահպանման վրա:

Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, մայիսի 9-ի, մայիսի 28-ի, վերջին գանգի ամանորյա նվերների և այլ միջոցառումների կապակցությամբ ծախսվել է 3000.0 հազար դրամ:

Մեծ միջոցառում կազմակերպվեց նվիրված «Սուրբ Աստվածածին» եկեղեցու 100-ամյակին:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուների և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:

Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված ծաղկեպսակներ է դրվել հայրենական մեծ պատերազմում և արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանին:

2014 թվականի ընթացքում համայնքում մահացածների շիրիմների համար գյուղապետարանի կողմից գնվել է ծաղկեպսակներ:

Ուշադրության կենտրոնում է գտնվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը:

Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարաքային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգեբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի նրախնություն մեզ համայնքում նման երեխաներ չկան: Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվել է ֆինանսական օգնություն: Տարվա ընթացքում համայնքի շուրջ 150 սոցիալապես անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն 40.0 հազարական դրամ:

Համայնքում հաշվառված են 440 թոշակատուներ՝ այդ թվում 420 ծերության և աշխատանքային, 20 հաշվանդամություն: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 93:

Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչիկների նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

2014 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 46 երեխա, մահացածների թիվը՝ 30:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները: Գույքահարկի գանձումը տարեկան կտրվածքով նախատեսվել է 7297,9 հազար դրամ, փաստացի գանձվել է 6446,2 հազար դրամ, որը կազմում է 88,3% : Հողի հարկի տարեկան նախատեսվել է 13042,1 հազար դրամ, գանձվել է 13405,5 հազար դրամ, որը կազմում 102,8 %: Պլանով նախատեսված այլ եկամուտները 102,6 հազար դրամ, փաստացի գանձվել է 588,0 հազար դրամ, որը կազմում է 57,6, %, համայնքի սեփ. հանդիսացող հողի վարձակալություն 241,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 608,9 հազար դրամ, որը կազմում է 252,7 %: Տեղական տուրքեր նախատեսվել է 380,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 245,0 հազար դրամ, որը կազմում է 64,5 %: Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100,0 %:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Ոռոգման ներտնտեսային ցանցը շուրջ 4.5 կմ տարածքով վերակառուցման անհրաժեշտություն ունի,

2. Խմելու ջրագիծը, որը կառուցվել է 1961 թվականին, վաղուց հիմնովին վերանորոգելու կարիք ունի,
3. Միջհամայնքային ՝ Բամբակաշատ -Նոր Արմավիր /գերեզմանոց/ ճանապարհը 1 կմ կապիտալ նորոգելու կարիք ունի՝ ասֆալտապատում,
4. Մշակույթի տան վերանորոգում:
5. Գյուղապետարանի շենքի հիմնովին վերանորոգում:

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Բամբակաշատի գյուղապետարանը տարվա ընթացքում ստացել է 185 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիք ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել են 251 գրություն, հղվել է 230 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է 1772 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 7 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 121 որոշում:

2014թ. տարվա ընթացքում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 16 մարդ, որից 6-ը համայնքային ծառայողներ են:

2014 թ. դրությամբ աշխատավարձի և սոց. Կճարումների պարտքեր չկան:

2014 թ. տարվա ընթացքում համայնքի ավագանին գումարել է 9 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

Դեկտեմբերի 25-ին դպրոցում ամանորին նվիրված համայնքային միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարի կողմից երեխաններին բաժանվեց տոպրակներ:

Դեկտեմբերի 25-ին համայնքի մեծահասակներին ևս բաժանվեցին ամանորյան նվերներ:

Համայնքի ղեկավար՝

Ա. Եղիազարյան